ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 123/10

Քաղ. Երեւան **31 մայիսի 2010թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. մայիսի 31-ի նիստում (արձանագրություն N80/5) քննարկեց «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲ ընկերության 2010թ. ապրիլի 19-ի բողոքը «Վան 777» ՍՊԸ-ի անունով գրանցված «ԱՌՆԻ АРНИ» (N 14381) բառային ապրանքային նշանի գրանցման գործողությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Բողոքում նշված է, որ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունը 2009թ. հուլիսի 7-ին «Վան 777» ՍՊԸ–ի անունով գրանցել է «ԱՌՆԻ АРНИ» (N 14381) ապրանքային նշանը:

Բողոքարկողը գտնում է, որ «ԱՌՆԻ АРНИ» (N 14381) ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրվել է գործող մի շարք իրավական ակտերի դրույթների խախտմամբ եւ ոտնահարվել է «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ի օրենքով պաշտպանվող իրավունքներն ու օրինական շահերը եւ ենթակա է անվավեր ճանաչման՝ հիմք ընդունելով ստորեւ նշված պատճառաբանությունները:

Բողոքում նշված է, որ «Երևանի կոնյակի գործարան» ՓԲԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման (Նիցայի դասակարգում) 33-րդ դասում գրանցված «ԱՆԻ» բառային ապրանքային նշանի (գրանցման համարը՝ 5318, գրանցման թվականը՝ 15.09.2000թ., «Арарат ԱՆի Ани» համակցված ապրանքային նշանի (գրանցման համարը՝ 10003, գրանցման թվականը՝ 16.11.2005թ.,), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչության բողոքարկման խորհրդի 12.03.2001թ. թիվ1-128/7 որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում «Երևանի կոնյակի գործարան» փակ բաժնետիրական ընկերության անունով 33-րդ դասում հայկական կոնյակների համար հանրահայտ ճանաչված «Անի» ապրանքային նշանի սեփականատերը (թիվ 5318, 10003):

Բողոքարկողը նշել է, որ «Անի» ապրանքային նշանը հանրահայտ է ճանաչվել՝ սկսած 1978 թվականից։

Բողոքարկողը գտնում է, որ հիմք ընդունելով «Ապրանքային և սպասարկման նշանների ապրանքների ծագման տեղանունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի ա), գ) ենթակետերը, «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» Փարիզյան Կոնվենցիայի 6bis հոդվածը, «Ապրանքային եւ սպասարկման նշանների հայտերի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման» կարգի 92-րդ կետի երկրորդ պարբերությունը, ամենայն համոզմամբ, կարելի է ասել, որ «Առնի» նշանը շփոթելու աստիճան նման է իր կողմից գրանցած «Անի» բառային նշաններին։ Տեսնելով «Առնի» նշանը՝ սպառողի մոտ անպայման կառաջանա «Անի» նշանի մտապատկերը։ Բողոքարկողը միաժամանակ նշում է, որ «Անի» նշանի հանրահայտ լինելու փաստը, որը եւ բավարար հիմք է «ԱՌՆԻ АРНИ» (N 14381) ապրանքային նշանը անվավեր ճանաչելու։

Վերոհիշյալ կարգի 97 կետի համաձայն Բառային նշանների նմանությունը կարող է լինել ձայնային (հնչյունային), գրաֆիկական (տեսողական) և իմաստային (արտահայտած մտքի)։ Այս դեպքում «Առնի» նշանը նման է «Անի» նշանին թ՛ե հնչյունային, և թ՛ե գրաֆիկական առումներով։

Նույն կարգի 99-րդ կետով սահմանված թվով 6 չափանիշներից յուրաքանչյուրով համեմատելիս նշանների նմանությունը ակնհայտ է եւ բացառություն է կազմում «Առնի» նշանում «ռ» տառի առկայությունը։

Բողոքարկողը գտնում է, որ «Առնի» նշանին իրավական պահպանության տրամադրումը հակասում է նաև անբարեխիղճ մրցակցության կանխման կանոններին, ինչը արգելված է Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետով և Փարիզյան կոնվենցիայի 10bis հոդվածով։

Որպես ամփոփում իր բողոքի, բողոքարկողը խնդրել է ամբողջովին անվավեր ճանաչել «Առնի» նշանի իրավական պահպանությունը, հիմք ընդունելով Փարիզյան կոնվենցիայի 6bis և 10bis հոդվածները, Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի ա) ենթակետը, 12-րդ հոդվածի 1-ին մասի ա) և գ) ենթակետերը, 28-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթակետը, Կարգի 14, 15, 92, 96-100 կետերը, ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2009թ. մարտի 25–ի թիվ 209-Ն որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքներ և դիմումներ ներկայացման և քննարկման կարգի 74 կետի 1-ին ենթակետը։

Ի պատասխան ՀՀ մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի 22.04.2010թ. բողոքի ծանուցման, 05.05.2010թ. «Վան 777» ՍՊԸ-ից ստացվել է գրություն, որտեղ շարադրված են ընկերության առարկությունները։

Ընկերությունը գտնում է, որ բողոքում նշված փաստարկները անհիմն են եւ և ենթակա են մերժման։ Ընկերությունը նշել է որ Կարգի 98-րդ եւ 99-րդ կետերով սահմանված «ԱՌՆԻ ԱՐՒԻ» և Բողոքարկողին պատկանող «ԱՆԻ ԱՒԻ» ապրանքային նշանների ձայնային (հնչյունային), գրաֆիկական եւ իմաստային նմանությունը չի ապացուցվել ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից իրականացվող փորձաքննության ժամանակ, իսկ Բողոքարկվողի փաստարկները, ընդամենը նրա սուբյեկտիվ կարծիքն են եւ գտնում է, որ որեւէ հիմք չկա ապրանքային նշանի իրավական պահպանությունը անվավեր ճանաչելու։

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲ ընկերության կողմից բողոք է ստացվել «Վան 777» ՍՊԸ-ի «ԱՌՆԻ ԱՐՒԻ» (N 14381) ապրանքային նշանի անվավեր ճանաչման վերաբերյալ։ Նշվեց, որ բողոքարկողի պահանջը հիմնավորված է այն փաստով, որ 2009 թվականի հուլիսի 7-ին «Վան 777» ՍՊԸ-ի անունով ԱԾՄԴ 33-րդ դասի համար գրանցվել է «ԱՌՆԻ ԱՐՒԻ» (N 14381) ապրանքային նշանը, իսկ բողոքարկողի «Անի» բառային ապրանքային նշանը հանրահայտ է ճանաչված համաձայն ՀՀ արտոնագրային վարչության բողոքարկման խորհրդի 12.03.2001թ. թիվ 1-128/7 որոշման։

Նշվեց, որ բողոքարկողը իր պահանջը հիմնավորել է, ղեկավարվելով Փարիզյան կոնվենցիայի 6bis և 10bis հոդվածներով, Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետով, 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «գ» ենթակետերով, 28-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով, Կարգի 14, 15, 92, 96-100 կետերով, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2009թ. մարտի 25–ի թիվ 209-Ն որոշմամբ հաստատված ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքներ և դիմումներ ներկայացման և քննարկման կարգի 74 կետի 1-ին ենթակետով։

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց նաեւ, որ համաձայն Փարիզյան կոնվենցիայի 6bis հոդվածի, ապրանքային նշանի գրանցումը կարող է անվավեր ճանաչվել, եթե այդ ապրանքային նշանը նույնական կամ շփոթելու աստիճան նման է իրավասու մարմնի կողմից նույն կամ նունատիպ ապրանքների համար արդեն իսկ հանրահայտ ճանաչված ապրանքային նշանին։ Կոլեգիան գտնում է, որ «ԱՌՆԻ ԱՐՒԻ» ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է ՀՀ-ում հանրահայտ ճանաչված բողոքարկողի «Անի» բառային ապրանքային նշանին եւ դրա օգտագործումը սպառողի մոտ մոլորություն կառաջացնի ապրանքի արտադրողի հարցում։

Ընդհանուր քննարկման արդյունքում կոլեգիան որոշեց բավարարել բողոքը՝ հիմք ընդունելով Երեւանի Կոնյակի գործարանի «Անի» հանրահայտ ապրանքային նշանի առկայության փաստը։

Հիմք ընդունելով ներկայացված ապացույցները, ընդհանուր քննարկման արդյունքում բողոքարկման խորհուրդը պարզեց, որ այս դեպքում առկա են կոլեգիայի կողմից պարզված հանգամանքները եւ կիրառելի է Փարիզյան Կոնվենցիայի 10 bis հոդվածի դրույթները, ինչպես նաեւ գործում է Օրենքի 28-րդ հոդվածի 1 մասի «ա» ենթակետը, համաձայն որի, ապրանքային նշանը կարող է վիճարկվել եւ ճանաչվել անվավեր ամբողջովին կամ մասնակիորեն՝ իրավական պահպանության ամբողջ ժամկետի ընթացքում, եթե այն տրամադրվել է սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ։

Ելնելով վերոգրյալից եւ առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման» կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետով՝ բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Երեւանի կոնյակի գործարան» ՓԲ ընկերության բողոքը եւ «ԱՌՆԻ ԱՐՈՒ» (գրանցման համար՝ N 14381) բառային ապրանքային նշանի գրանցումն ամբողջովին անվավեր ճանաչել։

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան։

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան